

Թիւ 26478
Օգոստոս 15, 1979

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Կը փափաքինք մեր եւ Թեմական Խորհուրդի խորին շնորհակալու-
թիւնը յայտնել ձեզի եւ Ծխական Խորհուրդիդ՝ Յուլիս 13-14ին
Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ զրասննեակին մէջ գու-
մարուած Թեմական Խորհուրդի ժողովին առթիւ ձեր կողմէ կատար-
ւած հիւրասիրութեան եւ պատշաճ կարգադրութեանց համար:

Այս առթիւ Թեմական Խորհուրդը իր գնահատանքը կը յայտնէ
Թորոնթոյի մեր համայնքային կեանքին մէջ ստեղծուած տազնապի
ընթացքին Ծխական Խորհուրդիդ ցուցաբերած հաւատարմութեան եւ
հաստատ ղիրքաւորումին համար:

Կաւարձանք որ Տէրը իր մշտական հովանիին ներքեւ պահէ Թո-
րոնթոյի մեր համայնքը՝ որպէս զի խաղաղ եւ անդորր մթնոլորտի
մէջ շարունակուին եկեղեցաշէն եւ ազգանուէր բարի գործերը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ